# ՄԻՆՉԵՎ Ե՞ՐԲ

Վերջերս Ստեփանակերտում լուրեր տարածվեցին, որ Շուշվում Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու վրա հարձակում է եղել։ Հունիսի 29-ին, երբ տեղեկացանք, որ լուրերն այդ անհիմն չեն, դիմեցինք ԼՂԻՄ ՆԳՎ պետ Ռոբերտ Թումանյանցին։ Զնայած այն բանին, որ ՆԳՎ-ում առաջին տեղեկությունը ստացել էին դեռևս հունիսի 24-ին, միլպետը և մեր զրույցին մասնակցած ԽՍՀՄ ՆԳՄ ներկայացուցիչները կտրականապես ժխտեցին հարձակման փաստը, դա պատճառաբանելով հետևյալ կերպ՝ ինֆորմացիան դեռ ամփոփվում է։ Եվ զերադասեցին լռել այն մասին, որ նույն օրը իրենց օպերատիվ խումբը եղել է Շուշվում, բայց թույլ չեն տվել եկեղեցին մտնել, քանի որ «ներքին գործերի Շուշվա շրջանային բաժինը չի երաշխավորել նրա անվտանգությունը»։

Անսալով մեր խնդրանքին, ՆԳՎ-ի աշխատակիցներին հանձնարարվեց պարզել կատարվածը։ Հիշեցնենք՝ դա եղել է հունիսի 29-ին... Հաջորդ օրերին մեզ չհաջողվեց հանդիպել միլպետին, թեև պայմանավորվել էինք։ Միայն հուլիսի 4-ին հաջողվեց հեռախոսով կապվել նրա հետ։ Մեզ հայտնեցին, որ շրջանային բաժինը ինֆորմացիա նույնպես չունի, բայց դրա փոխարեն ՆԳՎ-ն պատրաստ է ապահովել «Ամարասի» թղթակիցների այցի անվտանգությունը։ Շուշի մեկնելու խնդրանքով մենք եղանք ՆԳՎ-ի պետի տեղակալ, գնդապետ Ուսենկոյի մոտ։ Խոստանալով ամեն ինչ անել ճշմարտությունը պարզելու համար, գնդապետը հայտարարեց, որ



Գործ՝ Նկարիչ Առնոլդ Մելիքսեթյանի

Շուշի քաղաքի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին

եկեղեցին մտնելն անվտանգ չէ, քանի որ նրա շուրջը մշտապես խմբեր են հավաքվում, որոնք կարող են հարձակվել մեզ վրա։ Ի դեպ, մեր ընթերցողներին հայտնենք, որ հունիսի 28-ին այստեղ ծեծել են Ֆրանսիայի քաղաքացի Արամ Տեր-Մինասյանին և վերջինիս ուղեկցող մարդկանց։

Ուսենկոն ինքը մեկնեց Շուշի, որպեսզի շրջանային միլիցիայի հետ քննարկի հարցը։ Վերադառնալուց մենք նորից հանդիպեցինք։ Գնդապետի ասելով շրջանի միլպետը պատրաստակամություն է հայտնել ապահովել մեր անվտանգությունը, բայց քանի որ Շուշվա շրջգործկոմի նախագահը հրաժարվել է ոչ ոքի չթողնել եկեղեցու մոտ, ապա պետք է դիմել ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեին։ Սակայն վերջինս էլ անզոր եղավ մեզ օգնել։

Ահա այսպես ադրբեջանականացված հայկական քաղաքի հայոց եկեղեցին դարձավ փակ գոտի։

Հարց է ծագում՝ ինչու՞ շրջանային իշխանությունները յոթ փականի տակ են պահում եկեղեցին, ԼՂԻՄ ՆԳՎ-ն էլ այնքան թուլակամ է, որ չի կարողանում կատարել իր ծառայական պարտականությունները անգամ ռազմական դրության պայմաններում։ Դա դժվար չէ կռահել, եթե կարողանայինք իմանալ, թե ինչ է կատարվել հայոց եկեղեցում։

Քանի որ ոչ ոք չի ուզում պաշտոնական ինֆորմացիա տալ, մենք ստիպված դիմեցինք այն մարդկանց, որոնք իրենց աչքով տեսել են եկեղեցին հարձակումից հետո։ Պարզվեց հետևյալը. եկեղեցու բակում ընկած են կիսայրված տախտակներ։ Սարալը և ծածկը լրիվ այրված են, քանդվել է փողոցի կողմից զանգակատուն տանող մուտքը փակող աղյուսաշարը, ջարդուփշուր է արվել զանգակատը։ 20-րդ դարի վայրենիներն այնտեղ են մտնում բնական պետքերի համար։ Եկեղեցու բեմի մարմարե սալիկներին՝ խաչի կողքին, մերկ կին է նկարված, իսկ շուրջը՝ հայհոյանքներ։ Քանդակների վրա փորագրման հետքեր կան։ Խաչերից մեկի վրա արաբական տառերով գրություն կա։ Չկան եկեղեցու փայտե գլխավոր դռները։ Իսկ բակում և եկեղեցու ներսում մակաղել էր հոտը։ Եվ արևի տակ տխուր առկայծում էր 1920 թվականից հրաձգության հետքեր կրող զանգակատան խաչը։ Պատմությունը կրկնվում է։ Իմանալով այսքանը, մարդ ուղղակի ապշում է՝ միթե դարերն անզոր են վայրենիներին կրթելու համար։ Եվ դեռ որքան պիտի մարդիկ նմանվեն այն չորքոտանիներին, որոնք այսօր մակաղել են եկեղեցու բակում։

Զրահավորված զինվորները հայրենասիրական երգեր որոտալով անցնում են Ստեփանակերտի փողոցներով, նրանց զինակիցներն էլ խիտ շարքերով շրջապատել են Հատուկ կառավարման կոմիտեի շենքը։ Ու՞մ են պաշտպանում։ Ու՞մից։ Իսկ Շուշիում, որ հիշեցնենք, գտնըվում է Հատուկ կոմիտեի ենթակայության տակ, մարդակերպ անասունները պղծում են պատմության հուշարձանը։ Մինչև ե՞րբ։

ՍԵՐԳԵՅ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Խմբ. Հուլիսի երկրորդ կեսերին եկեղեցու, ինչպես նաև քաղաքի ուրիշ հայկական հուշարձանների վրա նորից հարձակվեցին բարբարոսների հրոսակախմբերը։

Որտե՞ղ է մարզի դատախազ Վասիլենկոն։